

ՓՈԽԱՆՈՒՆ ՍԵՌԱԿԱՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Դասական հայերենում լայն կիրառություն ունի փոխանուն սեռականը է՛լ ափելի, քան ժամանակակից հայերեն գրական լեզվում: Այլ հոլովով դրված հարակից գոյական շունեցող, սակայն հոգ ու նախդիր ընդունած սեռականի, կամ զեղչված հատկացյալով հատկացուցչի, այսինքն փոխանուն սեռականի կիրառությունը նախադասության մեջ կարող է մթազնել նրա իմաստը, եթե մեզ ծանոթ չլինի քերականական այդ երևույթը:

Փոխանուն սեռականի ճիշտ ըմբռնումից կախում ունի ամբողջ նախադասության, բնագրի ճիշտ ընկալումը: Ինչպես նախադասության որևէ զեղչված անդամի, այնպես էլ փոխանուն սեռականի մեջ զեղչված հատկացյալի վերականգնումը ընթերցողից պահանջում է առանձին ուշադրություն:

Նույն նախադասության սահմաններում փոխանուն սեռականի իմաստը երբեմն չի պարզվում, անհրաժեշտ է լինում ընթերցել հաջորդող տողերը: Օրինակ՝ Մի՛ առաքիցէք զնա ունայն, այլ տալով տաջիք նմա զնաւուածոցն (Ա. Թագ., 2, 3):

Հաջորդող տողերի ընթերցումից պարզվում է, որ զեղչված հատկացյալը «զտուզանս» կամ «զհատուցումն» բառն է, որը սակայն չի հիշատակվել կոնտեքստում:

Հատկացյալի զեղչումը, հետևաբար փոխանուն սեռականի փոխությունը գրաբարում չի վրիպել 19-րդ դարի քերականների ուշադրությունից¹: Նրանք ըստ այնմ կանոն են սահմանել հատկաց-

¹ Իր ժամանակին Պաղտատար Դպիրն այս մասին գրել է. «Երբեմն նախդիրն և յօդն հայցականին՝ առադրեն սեռականին, և ինքն հայցականն զօրութեամբ իմացեալ լինի» (Պարզարանութիւն քերականութեան, Կ. Պոլիս, 1771, հա. 2-րդ, էջ 376):

յալի զեղչվելու և հատկացուցչի կողմից «զօրութեամբ» կամ «լռելայն» պարփակելու՝ կամ ներառնվելու մասին (տե՛ս Մ. Զամչյան, 1826, էջ 292, Ա. Բագրատունի, պ. 1020 և այլն)։ Զա-
ռիսյան—Այտրեյան քերականության մեջ փոխանուն սեռականնե-
րը կոչվում են «Սեռականն առնված ուղղականներ» (1885 թ.,
էջ 190)։ Հ. Աճառյանն իր «Լիակատար քերականության» մեջ
(3-րդ հ., էջ 852) փոխանուն սեռականը քննում է «Կրկնակ հոլո-
վում» վերնագրի տակ։ Սակայն «փոխանուն սեռական» տերմինը
մենք առաջին անգամ գտնում ենք Մ. Արեղյանի մոտ («Աշխար-
հաբարի շարահյուսութիւն», էջ 188—190)։

Ներկա հոդվածի սահմաններում մենք փորձել ենք համակող-
մանիորեն ուսումնասիրել գրաբարի փոխանուն սեռականը՝ նրա
անհոլովելիությունը գրաբարում, նրա հոդառութիւնը, նախդրա-
ռութիւնը, արտահայտած զանազան իմաստները։ Որոշ դեպքերում
մեզ թույլ ենք տվել վերանայել գրաբարի փոխանուն սեռականի
վերաբերյալ մեր քերականների կողմից արտահայտված որոշ տե-
սակետներ կամ փոխանուն սեռական պարունակող որոշ նախա-
դասութիւնների թարգմանությունը Ս. Մախաւսյանցի մոտ և ըստ
այնմ արտահայտել մեր համեստ կարծիքը։

Գրական լեզուն ընդհանրապես խուսափում է նախադասու-
թյան նույն անդամների, համանման կապակցությունների մեջ նույն
բառերի կրկնությունից։ Այդ իսկ տեսակետից այլ գրական լեզու-
ների թվում աչքի է ընկնում նաև դասական հայերենը՝ գրաբարը,
որը մանավանդ որոշ մատենագիրների մոտ փայլում է պեսպիսու-
թյամբ, ավելադրութեամբ և այլ ոճական հնարներով զարդարված
քարձր ոճով, որով անհրաժեշտորեն կրկնվող միտքը արտահայտ-
վում է նույնանիշ կամ հոմանիշ բառերի, շարահյուսական համա-
նիշների վարպետ կիրառութեամբ՝ առանց սակայն շատախոսու-
թյան հանգելու։

Մյուս կողմից, պեսպիսութիւնների և ավելադրութիւնների
հետ գրաբարին հատուկ է նաև սեղմությունը, համառոտութիւնը,
նախադասութեան նույնատիպ կապակցությունների մեջ կրկնվող
անդամների զեղչումը, ըստ որում և հատկացյալի զեղչումը հատ-
կացուցչի մոտ։

Մտքի հաղորդումը հաճախ պահանջում է, որ տվյալ նախա-
դասութեան նախընթաց մասում արտահայտված մի հատկացյալ
կրկնվի երկրորդ կամ երրորդ հատկացուցչի մոտ, օրինակ՝

«Խոստովան լինէի զմեզս իմ և զմեզս ժողովրդեանն Իսրայելի»
(Դաճ., Թ., 20)։

Հաճախ էլ անհրաժեշտ է լինում իբրև հատկացյալ գործածել մի բառ, որ որպես այլ անդամ է հանդես եկել նախադասության սախընթաց մասում: Օրինակ. «Եւ ահա աչք իբրև զաչս մարդոյ յեղջերն յայն» (Դան., է, 8):

Նախադասության մեջ արդեն կիրառված բառը նույնանման կամ այլ կապակցության մեջ կրկնելուց խուսափելու համար ամեն մի լեզու դիմում է իր ներքին օրինաչափություններին հատուկ որևէ քերականական միջոցի:

Նշված երկու դեպքերում հատկացյալը նույն բառով կրկնելու փոխարեն լեզուները օգտագործում են հետևյալ միջոցները¹:

Հատկացյալի իմաստը կարելի է կրկնել ոչ թե նույն բառով, այլ նրա հոմանիշով: Օրինակ. «Զի թէ զնոցայն վնասակարութիւնն՝ որ ոչ խորհրդով լինի՝ ատեալ պարտ իցէ, ո՛րչափ ևս առաւել զմարդկան մեղանշակաւորին՝ որ խորհրդով և նենգութեամբ լինիցի» (Ծղն., 2, ԺԱ, 147):

Նույն հատկացյալը երկրորդ կամ երրորդ հատկացուցչի մոտ նույն բառով կրկնելու կամ իր մի հոմանիշով արտահայտելու փոխարեն երբեմն էլ կարելի է հատկացուցիչները դարձնել բազմակի, եթե նրանց հատկացյալները նախադասության մեջ նույն պաշտոնն են կատարում և անմիջապես հաջորդում իրար. օրինակ՝ «Որ մարմնաւոր է՝ շորից հիւթից յօդեալ է, որպէս մարմինք մաքղկան և բնաւ անասնոց» (Ծղն., 1, ԻԳ, 91): Բայց վերոհիշյալ երկրորդ օրինակում չի կարելի երկրորդ հատկացյալը զեղչել և բազմակի հատկացուցիչներ ստանալ, որովհետև նրանց հատկացյալները գտնվում են բարդ նախադասության կազմի մեջ մտնող առանձին նախադասություններում: Նման դեպքում եթե երկրորդ հատկացյալը զեղչվում է, ապա առկա մնացող հատկացուցիչը պետք է արտահայտի նրա իմաստը և ներառնելով այն՝ նախադասության մեջ փոխանունարար կիրառվի նրա պաշտոնով: Այդպիսի հատկացուցիչը կոչվում է փոխանուն սեռական: Այսպես, եթե երկրորդ օրինակում երկրորդ հատկացյալը փոխանուն սեռականով արտահայտենք, կստացվի հետևյալը. «Եւ ահա աչք իբրև զաչս մարդոյ յեղջերն յայն»—և ահա աչք իբրև զմաքղոյ յեղջերն յայն:

Սլավոնական լեզուներում, հատկապես ռուսերենում, հայերե-

¹ Հասկանալի է, որ երկրորդ հատկացուցչի մոտ նույն հատկացյալի կրկնումը նույն բառով՝ քերականորեն միանգամայն ճիշտ է: Իրողությունը հենց այդպիսին է ռուսաց լեզվում, երբ այն հատկացուցիչը, որի հատկացյալը պետք է զեղչվեր, արտահայտվել է գոյականով: Օր. Климат Крыма жарче, чем климат Москвы.

նի (գրաբարի և աշխարհարարի) գոյական փոխանուն սեռականին համապատասխանում է նրանց ստացողական անվանը¹ (притяжательный прилагательный),

Դասական հայերենում զեղչված և փոխանուն սեռականով արտահայտված հատկացյալը երբեմն կիրառված է լինում ոչ թե տվյալ նախադասության առաջին մասում, այլ նախորդ նախադասության մեջ, Օրինակ. «Նա պատասխանի ետ միում ի նոցանէ՝ և աւէ. Ընկեր՝ շղրկեմ զքեզ, ո՛չ դաճեկանի միջոց սակ արէր ընդ իս: Ա՛ռ զգոյշ և երթ (Մատթ., Ի, 13—14):

Ժամանակակից հայերենում սեռական հոլովով արտահայտված և փոխանունաբար կիրառված յուրաքանչյուր խոսքի մաս փոխանուն սեռական է կոչվում, ըստ որում դերանվամբ արտահայտվածը՝ փոխանուն սեռական դերանուն:

Գրաբարում ևս ստացական դերանուններից բացի մյուս դերանուններով արտահայտված և նախադասության մեջ փոխանունաբար կիրառված հատկացուցիչները կարելի է անվանել փոխանուն սեռական դերանուն:

Ասկայն ճիշտ չէր լինի գրաբարի քերականության մեջ ևս «փոխանուն սեռական դերանուն» անվանել, ստացական դերանուններով արտահայտված հատկացուցիչները, որոնց հատկացյալները զեղչվել են և փրենք գործածվել իբրև փոխանուն:

Գրաբարի ստացական դերանուններն իրենց ծագումով իսկ ինքնուրույն բառ և թեքվող խոսքի մաս հանդիսացող սեռական հոլովաձևեր են: Ուստի ավելորդ կլիներ դրանք դարձյալ անվանել սեռական, փոխանուն սեռական կամ փոխանուն սեռական դերանուն: Գոյականների հետ գործածվելիս ստացական դերանունները սովորաբար հոլովով համաձայնում են նրանց և ամեն դեպքում էլ հատկացուցիչ են. ուստի թեք հոլովաձևերում ևս, եթե նրանց հատկացյալը զեղչվի, նրանք կդառնան փոխանուն հատկացուցիչ, սակայն ոչ անպայման փոխանուն սեռական, քանի որ տվյալ դեպքում նրանք իրենց հոլովման (Ո) սեռական հոլովով հանդես չեն եկել:

Իրենց հատկացյալի զեղչման հետևանքով փոխանունաբար գործածված ստացական դերանունները ճիշտ կլինի անվանել փոխանուն ստացական դերանուն:

Փոխանուն սեռականներն ու փոխանուն ստացական դերանունները միաժամանակ երկու իմաստ են արտահայտում. թե՛ կա-

¹ Տե՛ս 2. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 1, էջ 40:

պակցութեան հատկացուցի իմաստը, քանի որ իրենք հատկացուցիչ են և թե՛ զեղչված հատկացյալինը, որի համար էլ նրանք փոխանուն (սեռական) են կոչվում:

Իմաստների այս հակադրամիասնությունը հանձին հատկացուցիչի կատարվում է վերջինիս նոր ձևավորմամբ, նոր ձևույթ ստանալով: Արդի հայերենում հոգն է (հաճախ կրկնակ) այն քերականական միջոցը, որով հատկացուցիչն իր մեջ արտահայտում է զեղչված հատկացյալի իմաստը (նախարարինը, ձերը և այլն): Թուրքերենում, ադրբեջաներենում դա ki հարաբերական բառն է, որն այս դեպքում ածանցի դեր է կատարում և ըստ այնմ բառավորչից կցվում է հատկացուցիչին. օրինակ՝ Alininki—Ալինինը (Ալունը), Розанынки—Ռոզայինը: Հին հայերենում այդ քերականական միջոցը կարող է լինել հոգը, զեղչված հատկացյալի նախդիրը, կամ զրո քերականական միջոցը, ինչպես կա զրո ձևույթ, այսինքն՝ սպասելի ձևույթի բացակայություն: Երբեմն էլ հոգն ու նախդիրը միասին են դրվում փոխանուն սեռականի կամ փոխանուն սուղական դերանվան վրա: Օրինակ.

«... Թողեալ զթագատրութիւնն որդւոց իւրոց, Արկադեայ զԲիւղանդեայն և Ուորեայ զՀոռմայն» (Խոր., 309. 23)՝ ... Թաղավորութիւնը թողնելով իր որդիներին, Արկադիոսին՝ Բյուզանդիայից. Մուրիտոսին՝ Հոռմին: «Ճանաչեմ զիմսն և ճանաչիմ յիմոցն» (Յովհ., Թ, 14):

Այս նախադասություններում փոխանուն սեռականներն ու փոխանուն սուղական դերանունները նախդիր և հոգ են ընդունել միաժամանակ: Հաջորդ օրինակում զեղչված հատկացյալը փոխանուն սեռականի մեջ ներկայացնող քերականական միջոցը զրո ձևույթն է, ձևույթի բացակայություն. «Եւ որ ինչ անմարմին է՝ նա պարզ բնութիւն է, որպէս հրեշտակաց և դիւաց և ոգւոց մարդկան» (Եզն., 1, ԻԳ, 91):

Տվյալ նախադասություններում ընդգծված սեռականները դադարել են սովորական հատկացուցիչներ լինելուց. մնալով հատկացուցիչ՝ նրանք դարձել են նաև հատկացյալ, հենց իրենց զեղչված հատկացյալը, որի զեղչումից հետո վերափոխվել է նրանց թե՛ իմաստը և թե՛ արտաքին ձևը. ձևույթները (հոգ, նախդիր, զրո ձևույթ) հատկացուցիչներին հաղորդել են նոր իմաստ՝ նրանց մեջ առկա հատկացուցչային իմաստին ավելացրել են հատկացյալինը: Այդպիսով, նախկին հատկացուցիչը դարձել է հատկացուցիչ-հատկացյալ մեկ բառ, որ կարող է զեղչված հատկացյալի փոխարեն քործածվել նախադասության մեջ, չկորցնելով իր հիմնական իմաստ-

տը, Եթե աշխարհաբարում փոխանուն սեռականը որպես ուղիղ կամ ուղղական հոլով դիտվելով կարող է կրկնակ կամ փոխանվանական հոլովման ենթարկվել, ապա գրաբարում որպես օրինաչափություն, գոյական փոխանուն սեռականը ամենեկին չի հաղավում: Հստ Մ. Արեղյանի և Հ. Աճառյանի¹, նրա կիրառությունը նույնիսկ սահմանափակվում է ուղղական և հայցական հոլովներով, «... Սեռականները (փոխանուն սեռականները—Մ. Մ.) միայն ուղղական և հայցական հոլովով են գործածվում» (Մ. Արեղյան), Բերենք այս դրույթը հավաստող օրինակներ:

ա) Ուղղական հաղավում.

«Ճանապարհք վատաց կցեալ են փշովք, իսկ Ժրացն՝ վարունք են» (Առակ., ԺԾ, 19):

բ) Հայցական հաղավում (ուղիղ խնդիր).

«Եւ ոչ եթող զկարուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր՝ յեղբայրս» (Խոր., 312. 8):

«Մատայէր երկոցոմց թագատրացն, տալով զհարկս, զմասինն Պարսից՝ Վռամայ, և զմասինն Յունաց՝ Արկադեայ» (Խոր., 324. 22):

Փաստերը ցույց են տալիս, որ գրաբարում գոյական փոխանուն սեռականները մեծ մասամբ գործածվում են ուղղական և հայցական հոլովների իմաստով. սակայն հիմք ընդունելով այդ և գրաբարում փոխանուն սեռականի անհոլովելիությունը՝ ճիշտ չէր լինի կարծել, որ գրաբարում փոխանուն սեռականների գործածությունը սահմանափակվում է սոսկ այդ երկու հոլովների իմաստով, կամ իբր գրաբարում գոյական-հատկացուցիչի հատկացյալը լոկ ուղղական և հայցական հոլովներում է զեղչվում: Փաստերը, ճիշտ է, հազվադեպ են, բայց վկայում են, որ գրաբարում փոխանուն սեռականներն իրենց ուղղական-հայցական հոլովաձևով կարող են գործածվել ոչ միայն ուղղական և ուղիղ խնդիր-հայցական, այլև թեք հոլովների իմաստով (բացի սեռականից): Ահա մի քանի օրինակներ, որտեղ փոխանուն սեռականները, առանց նախդիրների օգնության, արտաքին հոլովի իմաստ են արտահայտում. «Եւ տեսի այլ գազան՝ զի ելաւէր յերկրէ, և տնէր եղջիւրս երկու նման գառինն» (Յայտ., ԺԳ, 11), այսինքն՝ «... նման եղջերաց (կամ եղջերց) գառին», «Այլ որ առ ազգին Ղանկուարտացն նորա արութինք քաջութեան՝ համարձակիմ ասել հաւասար սրբոյն Տրդատայ» (Խոր., 308. 6)՝ «... հաւասար են սուրբ Տրդատիններին, Տրդատի գործերին».

¹ Մ. Արեղյան, Գրաբարի քերականություն, 1936, էջ 164:

² Աճառյան, Լեզուաբանական քերականություն հայոց լեզվի, հատ. 3, էջ 856:

այսինքն՝ հաւասար արութեանց քաջութեան սրբոյն Տրդատայ, «Եւ յո՛ւր Տեառնն իսկ. «Եկեսցեն, ասէ, յարեւից...» (Թ. Թոռն., Հատրնաիր, էջ 353), այսինքն՝ «լո՛ւր բանին Տեառն»:

«Նախդիր վ միայն կը հոլովին սեռականն առնված ուղղականները» (Վ. Չալոխյան—Այաքնյան, 1885 թ., էջ 190): Ուստի փոխանուն սեռականի հոլովական առումը չի սահմանափակվում ուղղական կամ հայցական հոլովով, ոչ էլ նրա գործածությունը նախդիրների հետ՝ որոշյալ հայցականի նշան զ նախդիրով:

Հետեւյալ օրինակներում փոխանուն սեռականները ի (յ) նախդրի միջոցով «տեղային» կամ բայի խնդրային այլ իմաստ են արտահայտում. «Եւ մեղաւորացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին, կա՛մ ի մարդկան, կա՛մ ի գազանաց և ի նեկեաց և ի սողնոց» (Եղն., 2, ԺԱ, 155), այսինքն՝ կա՛մ ի մարմինս մարդկան, կա՛մ ի մարմինս գազանաց և այլն: «Ձուկն թէպետ և դայ յառակ, ի գերեզմանի առակ գայ՝ և ոչ ի կենդանութեան» (Եղն., 4, ԺԲ, 196):

«Յանուն նորա հեթանոսք յուսային. այսինքն ի Քրիստոսի» (Թ. Թոռն., Հատրնաւ., էջ 310)՝ ... Յանուն Քրիստոսի:

Հետեւյալ նախադասության մեջ փոխանուն սեռականը բացառական հոլովի իմաստով է.

«Յո՛ւր կողմանէ որ կամի լինել, ի Պաղոսի՞, թէ ի Ներսէսի» (Թ. Թոռն., Հատրնաւ., 165), այսինքն՝ ի կողմանէ Պաղոսի՞, թէ ի կողմանէ Ներսէսի:

Հետեւյալ օրինակում փոխանուն սեռականի գործիական (համատարբայն) հոլովի իմաստն արտահայտվում է առ նախդրի միջոցով. «Փոքր Աղեքսանդրի և Դարեհի պատերազմն առ Արաւշիսի բաղդատեալ» (Խոր., 124. 15—16):

Փոխանուն ստացական դերանունների հոլովման մասին խոսք չի կարող լինել: Նախքան հատկացյալի զեղչումը, ստացական դերանուն հատկացուցիչը հոլովով համաձայնած է լինում նրան ու վերջինիս զեղչումից հետո նա իր հոլովը չի փոխում փոխանուն ստացական դերանուն դառնալու համար:

Սորա, դորա, նորա, սոցա, դոցա, նոցա հոլովաձեւերով արտահայտված հատկացուցիչները փոխանունաբար կիրառվելիս հոլովվում են (Ո հոլովիչով). օրինակ.

«Նույնպէս և նոցայն՝ եթէ ուտէր որ՝ չվնասէր» (Եղն., 1, ԺԵ, 66): «Զի և ընտանիք օտարին նորայոցն ցանկանայցեն» (Եղն., 4, Ժ, 271):

Փոխանուն սեռականներին և փոխանուն ստացական դերանուններին կցված նախդիրը կամ նախադրությունը զեղչված հատկաց-

յալինն է իհարկե: Ինքնին հասկանալի է ուրեմն, որ եթե զեղչված հատկացյալն առանց նախդրի է եղել, ապա փոխանուններն էլ պետք է աննախդիր լինեն. օրինակ.

«Կիսոցն նրազուն դեղնեղի լինի և այլ ինչ յանդամոցն, որպէս առիծուն և արջոյ և այլոցն» (Եզն., 1, ԺԵ, 65), «... Զանգիտեալ պարսկական գունդն, սակաւ ինչ և մերն» (Խոր., 304. 12):

Ուստի նախդրի կիրառութիւնը փոխանուն սեռականների և փոխանուն ստացական դերանունների հետ անպայման անհրաժեշտ է: Սակայն կարծեք մեզ հակառակն է թելադրում Միք. Չամչյանի ձևակերպած կանոնի հետևյալ օրինակը. «Եւ երբեմն ևս առանց նախդրի եղեալ հատկացուցին՝ զօրութեամբ կրկնի յատկացուցեալն. զօր. Այս առակ, և դատաւորին՝ հաւասարապէս խրատեն զմեզ. այսինքն՝ և առակ դատատրին» (Քերակ., 1826 թ., էջ 293—294): «Դատաւորին» փոխանուն սեռականի աննախդիր լինելը բացատրվում է ոչ թե ձևակերպված կանոնով, այլ նրա զեղչված հատկացյալի («առակ») ուղղական հոլովով կամ աննախդիր լինելով: Նույն կանոնի համար Ա. Բագրատունին բերում է Խորենացու հետևյալ նախադասութիւնը. «Ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ եղբօր՝ յեղբայր (էջ 401, № 1021): Սակայն Պատմութեան քննական հրատարակութեան մեջ կարգում ենք հենց «զեղբօր» (էջ 312. 8): Վերահիշյալ կանոնը կարելի է ձևակերպել այսպես. երբեմն փոխանուն սեռականը չի ընդունում զեղչված նախդրավոր հատկացյալի նախդիրը, մնում է սովորական հատկացուցիչի ձևով. օրինակ.

«Կոչեաց զանուն երիցուն յանուն հօր Իւրոյ Գրիգորիս, և երկրորդին Յուսիկ» (Քիւղ., 4, Ե, 17), փոխանակ՝ «զերկրորդին», քանի որ զեղչվել է «զանուն» ուղիղ խնդիր հատկացյալը. հմմ. «Կոչեաց զանուն առաջնոյն Պապ, զերկրորդին Աթանագինէս» (Անդ., էջ 18): Սովորաբար գ նախդիրով հայցական հոլովով խնդիր ընդունող իրեր և ուրիշ նախադասութիւնների հետ երբեմն պատահում ենք աննախդիր փոխանուն սեռականների. օրինակ.

«Թեք ևս որա իբրև արծույ» (Դան., Ե, 4): Զորացաւ որպէս խեցւոյ զօրութիւն իմ, (Սաղմ., ԻԱ, ԻԲ), 16):

Փոխանուն սեռականի հոգառութիւնը գրաբարում.

«... Ժամանակակից հայերենում փոխանուն սեռականը անպայման հոգ է ընդունում, որոշ հոլովներում հոգը կրկնակի է. օրինակ՝ Սուրենինը, ձերը, քոնը, և այլն: Գրաբարում ևս, իբրև ընդհանուր կանոն, գոյական և դերանուն փոխանուն սեռականները և փոխա-

նուն ստացական դերանունները սովորաբար հոդ են ընդունում¹։
Ըստ որում դրեթե միշտ հոդ են ընդունում։

ա) Փոխանուն ստացական դերանուններն ու փոխանուն սեռական դերանունները. օրինակ. «Որդին զիւսն զիա՞րդ ոչ զընդայցէ» (Նզն., 2, Գ, 87)։ «նոյնպէս և նոցայն՝ եթէ ուտէր տք՝ չվնասէր» (Նզն., 1, Ժէ, 66)։ «Որպէս ասաց ոմն ի մերոցն» (Խոր., 39, 5)։ «Վասն այսորիկ ես ի վերայ իմոցս տղբալով ասեմ, որպէս Պաւղոս յաղագս իւրոցն» (Խոր., 247, 8)։

Եանթոթոթյուն.— Երբեմն հանդիպում ենք առանց հոգի գործածված փոխանուն և ստացական սեռական դերանվան. օրինակ՝

«Նախարարք կամին զտէրութիւն նորա ի վերայ իւրեանց առաւել քան զքո» (Բիւզ., ԺԵ, 181)։ «Են որ զիւրեանց սերմանեն և բազմապատիկ առնեն» (Առակ., ԺԱ, 24)։

Անորոշ դերանուններով արտահայտված փոխանուն սեռականները սովորաբար առանց հոգի են հանդէս դալիս. օրինակ. «...Զի ոչ առցուք զայլոյ, ի՞նչ կեցցուք» (Բիւզ., 3, Զ, 22)։ «Ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր, այլ ոյր ուրուի» (Նզն., 2, ԺԴ, 160)։

Կա նաև երբեմն հոդով. օրինակ. «Եւ կիսոցն ճրագուն դեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիւծուն և արջոյ և այլոցն» (Նզն., 1, ԺԵ, 65)։

Փոխանուն սեռական դերանունների և փոխանուն ստացական դերանունների հետ գործածվող հոդը դերանվանական ծագում ունի. «Ա՛ռ զքոյդ և ե՛րթ» նախադասութիւնը սկզբում կարող է եղած լինել «Ա՛ռ զդա, որ քոյ է, և ե՛րթ»։ Ապա սեռական հոլովով անձնական դերանունը կամ ստացական դերանունը միաձուլվել է ցուցական դերանվան հետ՝ ընդունելով նրա արմատական հնչյունը և նրա հոլովը (իհարկե, նրա նախդիրի հետ միասին, եթե ունի)։ Այդպիսով, հատկացուցիչ ստացական դերանունից և ուղիղ խնդիր ցուցական դերանունից առաջացել է զքոյդ (տվյալ դեպքում) փոխանուն ստացական դերանունը։ Այս դեպքում ռ հարաբերական դերանունը զեղչվել է։ Զեղչվել է նաև էական բայը, որը հնդեվրոպական նախալեզվում իսկ անվանական ստորոգյալի անհրաժեշտ մասը չի եղել։

¹ Գրաբարում փոխանուն սեռականի հոդը կրկնակ չի լինում, ի տարբերութիւն աշխարհաբարի։ Ուշ դարերում երբեմն միայն հանդիպում ենք կրկնակ հոգի. օր. Զի՛նչ եղև օգուտ հրէիցն՝ Երեմիայի լացն, և Քրիստոսինն Երուսաղեմի (Լաստիվերտցի, տե՛ս Ն. Բագրատունի, Փերակ., § 1117)։

Վիճակն այդպիսին է այժմ ռուսերենում, երբեմն նաև գրաբարում։
Օրինակ՝ Եւ անուն կուսին Մարիամ (Ղուկ. Ա, 87), այսինքն՝ ...էր
Մարիամ։

Գրաբարում ունենք հետևյալ քերականական կառուցվածքը.
սեռական + էական բայ + ուղղական (կամ անորոշ դերբայ)։ Օրինակ՝
«Քո է յաղթութիւն» (Ագաթ., 94. 12), «Ի քարինս դիւաց է
շահատակել» (Խոր., 330. 20)։

Նման դարձվածքները կարելի է թարգմանել աշխարհաբար
«պատկանել» բայով՝ «Քեզ է պատկանում հաղթությունը», կամ
էական բայով, սեռականը դիտելով ստորոգելիական վերադիր՝
«Հաղթությունը քոն է»։ Եթե սեռականները (քո, դիւաց) ստորո-
գելիական վերադիր համարենք, ապա կարելի է ձևակերպել հե-
տևյալ կանոնը. Փոխանուն սեռականներով և փոխանուն ստացա-
կան դերանուններով արտահայտված ստորոգելիական վերադիր-
ները զրաբարում, ի տարբերություն աշխարհաբարի, հոգ չեն ըն-
դունում։ Թաղմամբիվ փաստերից բերենք մի քանիսը.

«Եւ որ ինչ իմ է, ամենայն քո է. և որ ինչ քո է, այն իմ է»
Յովհ., Ժէ, 10)։ «Մի՛ եղիցի նա նորա» (Դան., ԺԱ, 17)։ «Գիտեմք
դի մեր լինելոց է յաղթութիւնն» (Բիւզ., 4, Ի, 201)։ «Քա՛ր արանց
է յարձակ և յազատ տեղւոջ կռուել» (Խոր., 290. 1.)։

բ) Փոխանուն սեռական դերանուններից և փոխանուն ստացա-
կան դերանուններից բացի հոգով են գործածվում նաև այն գոյա-
կան վախճանուն սեռականները, որոնց արտահայտած հատկացյալը
երբեք հանդես չի եկել բնագրում և կռահվում է նախադասության
ընդհանուր իմաստից. օրինակ. «Որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն
խորհիւն, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն» (Հռովմ., Ը, 5)։ «Տո՛ւք զկայ-
սերն կայսեր, և զԱստուծոյն՝ Աստուածոյ» (Մարկ., ԺԲ, 17)։ «Ար-
գելում ասել զՔրիստոսին—տալ վրէժս յարենէն Աբելի» (Խոր.,
294. 13), այսինքն՝ «զքանն Քրիստոսի»։

Փոխանուն գոյականների հետ և հոգն է գործածվում փոխա-
նուն սեռական դերանունների և փոխանուն ստացական դերանուննե-
րի ու նրանց հետ գործածվող հոգերի միշտ հաճախ իշխում է դիմա-
ջին համաձայնություն. այսինքն՝ երրորդ դեմքի փոխանուն սեռա-
կան դերանվան կամ փոխանուն ստացական դերանվան հետ գոր-
ծածվում է և հոգը (Յ-րդ դ.), երկրորդ դեմքի հետ՝ դ (Ջ-րդ դ.).
առաջին դեմքի հետ հոգի կիրառությունը տատանողական է ա-ի ե
ն-ի միշտ. իմ (փոխանուն) ստացական դերանվան հետ գերակշռում
է ո հոգը, իսկ մեր-ի հետ՝ և.

Հողի կիրառությունը փոխանուն սեռականների և փոխանուն ոտացական դերանունների հետ միանգամայն բնական և անհրաժեշտ է. ինչո՞ւ:

Կարելի է երկու պատճառաբանություն բերել:

ա) Գրաբարում հոգերի նշանակություններից և կիրառության դեպքերից մեկն էլ այն է, որ դրվելով ստորոգյալի վրա՝ հոգը հիշեցնում կամ վերականգնում է զեղչված կամ պարզապես չարտահայտված ենթական կամ խնդիրը. օրինակ.

«Ակնարկէ նմա Սիմովն Պետրոս հարցանել, ո՛վ իցէ վասն որոյ ասէն» (Յովհ., ԺԳ, 24), այսինքն՝ ով իցէ (Նա) վասն որոյ նա ասէ. «ոչ վասն ամենեցուն ձեր ասեմ, զի ես գիտեմ զորս ընտրեցիդ» (Յովհ., ԺԳ, 18), այսինքն՝ գիտեմ զձեզ, զորս ընտրեցիդ: Դրվելով լրացյալի վրա (որոշյալ, բացահայտյալ և այլն)՝ հոգը վերականգնում է զեղչված լրացուցչի իմաստը: Օրինակ. «Արդ արձակեա՛ զծառայս քո, տէր, ըստ բանի քում ի խաղաղութիւն» (Ղուկ., Բ, 29), այսինքն՝ արձակեա՛ զիս՝ զծառայ քո: Փոխանուն սեռականների կամ փոխանուն ստացական դերանունների հետ գործածված հոգը ևս կատարում է զեղչված կամ բոլորովին չարտահայտված անդամը վերականգնողի իր դերը. դրվելով առկա մնացած հատկացուցչի վրա, հոգը նրա մեջ վերականգնում է զեղչված հատկացյալի իմաստը. եթե այդ զեղչված հատկացյալը նախադասության նախընթաց մասում արդեն մի անգամ արտահայտված է եղել, հաջորդ հատկացուցչի վրա դրվող հոգը ընդգծում է, որ այն վերաբերում է նաև տվյալ հատկացուցչին, սակայն կրկնությունից խուսափելու համար հեղինակը այն չի արտահայտել: Եթե զեղչված հատկացյալը երբեք չի արտահայտվել տվյալ կամ նախորդ նախադասության մեջ, ապա հոգը նշում է, որ այդ հատկացուցիչը սովորական հատկացուցիչ չէ, այլ նա պահպանելով իր հատկացուցչային իմաստը, ներառել է նաև իր հատկացյալը ու նախադասության մեջ կիրառվել նրա պաշտոնով:

բ) Եթե հատկացուցիչը (սեռական հոլովը) փոխանունաբար գործածվել է իր հատկացյալի պաշտոնով, (որ կարող է տարբեր հոլովներով հանդես գալ), ապա անհրաժեշտ է, որ նա ստանա ուղիղ կամ ուղղական գոյականի առում: Եվ ահա այստեղից բխում է փոխանուն սեռականի կամ փոխանուն ստացական դերանվան հետ հոգի կիրառության երկրորդ անհրաժեշտությունը: Հոգը փոխանուն սեռականին կամ փոխանուն ստացական դերանուններին հաղորդում է ուղիղ կամ ուղղական ձև ունեցող գոյական դիտվելու և ըստ այնմ նախադասության մեջ կիրառվելու նշանակություն, որն

ինքը փոխանունության գաղափարն է: Դա նկատելի է նաև ստացական փոխանունների կամ այլ խոսքի մասերի, նույնիսկ ամբողջական նախադասությունների իբրև փոխանուն կիրառության մեջ: Օրինակ. «Այլ եղիցի ձեր բան՝ Այոն այո, և, Ոչն ոչ» (Մատթ., Ե, 37). «զՈ՛ւր ես»-ն յԱստուծոյ և ոչ յայլմէ տմեքէ հարցանի» (Խոր., 14. 20—21)՝ «Որտե՞ղ ես»-ը աստված է հարցնում և ոչ ուրիշ մեկը:

Փոխանուն սեռական դերանունների և փոխանուն ստացական դերանունների հետ հոգի կիրառության այդ երկու բացատրությունները մեր կարծիքով ճիշտ են. հոգն ավելացվում է նրանց վրա, քանի որ, իբրեւ հատկացուցիչ, նրանք հոգ չեն ընդունում: Սակայն հնարավոր է, որ քայական փոխանուն սեռականների հետ հանգես եկող հոգը հենց իրեն՝ հատկացուցիչինը եղած լինի, քանի որ գրաբարում գոյականով արտահայտված հատկացուցիչը կարող է հոգ ընդունել:

Թեպետ գոյական փոխանուն սեռականները սովորաբար հոգ են ընդունում, սակայն երբեմն հսկողիպում ենք սևհոգ փոխանուն սեռականների, մանավանդ երբ վերջիններս իբրև, որպես նախադրությունների խնդիրն են, և մանավանդ նախքան հատկացյալի զեղչումը նրանք բուն հատկացուցիչներ չեն եղել, այլ՝ որոշիչ սեռականներ. օրինակ. «Վարսք նորա իբրև զառիծուց մեծացան և եղնգունք նորա իբրև զթռչնոց» (Դան., Դ, 30):

«Ուտք նորա իբրև զարջու և բերան նորա որպէս զառիծու» (Յայտ., ԺԳ, 2); «Եւ լուայ զկնի իմ ձայն մեծ իբրև զփռոյն» (Յայտ., Ա, 10); Բայց հոգով՝ «Եւ զաչս նորա կուրացոյց, որպէս զՍեդեկիային այնու ի հնումն» (Խոր., 276.16), որովհետև Սեդեկիային բուն ստացական հատկացուցիչ է:

Ահա տարբեր պատճառների համար անհոգ մնացած փոխանուն սեռականներ.

«Եւ ոչ եթող զկալուածս որդւոյ ի հայր, և ոչ զեղբօր՝ յեղբայրս» (Խոր., 312. 8); «Եւ մեղատրացն ոգիք յաղտեղի մարմինս փոխիցին, կա՛մ ի մարդկան, կա՛մ ի գազանաց և ի ճնեաց և ի սոզնոց» (Եզն., 3, ԺԱ, 155):

Բազմակի փոխանուն սեռականներից բոլորի հոգ չունենալը պետք է բացատրել նրանով, որ հոգը սովորաբար բազմակի կամ համադաս անդամներից բոլորի վրա չի կրկնվում. օրինակ. «Եւ կիսոցն ճրագուն դեղնեղի լինի, և այլ ինչ յանդամոցն, որպէս առիծուն և արջոյ և այլոցն» (Եզն., 1, ԺԵ, 65):

ՓՈԽԱՆՈՒՆ ՍԵՌԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԱՆՈՒՆ
ՍՅԱՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոխանուն սեռականների (գոյական և դերանուն) և փոխանուն ստացական դերանունների իմաստները գրաբարում սովորաբար որոշվում են այն զեղչված հատկացյալի բառիմաստով, որ պարփակում են նրանք, իսկ այդ բառը կամ զեղչված հատկացյալը կարող է գտնվել՝

- ա) նույն նախադասության մեջ,
- բ) նախորդ նախադասության մեջ,
- գ) երբեք արտահայտված չլինել բնագրում:

Ձեղչված հատկացյալի վերականգնումը դժվար չէ, Գոյական փոխանուն սեռականների արտահայտած բառը կարող է երբեք արտահայտված չլինել կոնտեքստում, բայց եթե արտահայտվել է, ապա նույն նախադասության մեջ է գտնվում և անպայման նախորդում է փոխանուն սեռականին: Օրինակ. «Զմեղս իրեանց իբրև զՍողոմոնացոցն պատմեցին» (Ծնայի, Գ, 9):

Եթե այդ բառը նախընթաց նախադասության մեջ է, ապա բնականաբար փոխանունը հաջորդում է նրան: Օրինակ. «Ա՛ռ զքոյդ և երթ» (Մատթ., Ի, 14). լռելյայն իմացվում է «դահեկան» բառը: «Ենկեսցես տրպէս ես զիմսն սպանի, դու զֆոյսն» (Բիւզ., 5, Դ, 298), Փոխանուն ստացական դերանունները պարփակում են նախորդ տողերում հիշատակված ձևեր» բառի իմաստը: «Զանդրէն քոյսն յուսալով դարձ, հովուակցան, ոչ որպէս տայգերր, այլ որպէս նոյնազաւակ զուգահարբ, զմանկունսն փայփայեցեր» (Խոր., 359. 12—14)՝ «Ակնկալելով քո (փեսայի) դարձին, դու հովակցի ձեռքով մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպես տագերոջ, այլ ինչպես նույն զավակների երկրորդ հոր ձեռքով»: Ձեղչված է «փեսայ» բառը, որը հանդես էր եկել նախորդ տողերում:

Նույն նախադասության կազմում փոխանուն ստացական դերանունը կամ փոխանուն սեռական դերանունը սովորաբար նախորդում է իր ներառած և արտահայտած բառին. օրինակ՝ «Բայց ոչ իմ կամբ, այլ քոյդ լիցին» (Ղուկ., ԻԲ, 42): «Պատույ արժանի է ի ձէնջ, ըստ ձերում անմաքրասէր օրինացդ, թեպէտ ըստ մեռումն դատապարտի» (Խոր., 348. 17—19):

Սակայն փոխանուն ստացական և սեռական դերանունների արտահայտած բառը երբեմն նույն նախադասության կազմում հաջորդում է նրանց. օրինակ՝ «Եւ եթէ զնորայն իբրև զաստուծոյ չկարէին իմանալ, և զաջնափ հոգւոց՝ զորս եհան առ նորօք յիւր երկինսն՝ զօսաւինն զիա՞րդ ոչ առնուին» (Եզն., 4, է, 183—184),

այսինքն՝ եւ եթէ զսօսաւին նորա իբրեւ... «... Գթացեալ մարդասիրեաց, զնոցայն լաւ վարկուցեալ քան զիւրն փրկութիւն» (Խոր., 227. 4), այսինքն՝ ...զփրկութիւն նոցա լաւ վարկուցեալ քան զիւրն (փրկութիւն):

Երբ զեղշված հատկացյալը բոլորովին չի արտահայտվել բնագրում, ապա ինչպես նախադասության որևէ զեղշված անդամի, այնպես էլ նրա իմաստի ըմբռնմանը նպաստում է նախադասության ընդհանուր իմաստը, բնագիրը կամ կոնտեքստային միջավայրը: Այսպիսի դեպքում փոխանուն սեռականների և փոխանուն ստացական դերանունների արտահայտած իմաստները կարելի է բաժանել հետևյալ խմբերի: Զեղշված հատկացյալը կարող է լինել՝

ա) Իբք, (աշխհ. = բան), զործք կամ նրանց համանիշ մի բառ.

բ) Ինչք, ունեցվածք կամ համանիշ մի բառ, մեկին պատկանող բան.

դ) Ազգական, ընկեր, ընտանիքի անդամ և այլն նշանակող մի բառ, կամ ամենայն ոք դերանունը.

դ) փոխանվան արտահայտած նշանակությունը թվարկածներից ոչ մեկը չէ, այլ կոռուցվում է նախադասության ընդհանուր իմաստից:

Բերենք համապատասխան օրինակներ:

ա) Հետևյալ նախադասություններում փոխանուն սեռականների արտահայտած նշանակությունը գրաբ. Իբք (աշխ. մեկին կամ մի բանի վերաբերող բաներ), զործք կամ համանիշ մի բառ է.

«Ո՛չ խորհիս դու զԱսառնուդսն՝ այլ զմարդկան» (Մատթ., ԺԶ, 23): «Եւ որ կանամբին է, հողայ զաշխարհիս», (Կորնթ., 1, է, 33): «Որք ըստ մարմնոյն են՝ զմարմնոյն խորհին, և որք ըստ հոգւոյն՝ զհոգւոյն» (Հռովմ., Ը, 5):

Մանավանդ հոգնակի թվով դրված փոխանուն ստացական դերանունները ու փոխանուն սեռական դերանունները ևս երբեմն նշանակում են զործ, բաներ. օրինակ՝ «Քանզի և աշս և բերան և լսելիս վասն այնորիկ ետ մեզ Աստուած, զի բնաւին ամենայն անդամքն նմա ծառայեսցեն, զի նորայսն խօսեսցուք և զնորինսն արասցուք» (Թ. Թոռն., Հատընտիր, էջ 63)՝... Նրա գործերի մասին պատմենք և նրա գործերը կատարենք: «Զհոգայցեմք ինչ ընդ նոցա, այլ ընդ նոցայոցն» (Թ. Թոռն., Հատընտիր, էջ 113)՝ ...Նրանց վերաբերող բաներին հոգ տանենք:

Գրաբարում գոյություն ունի մի առանձին դարձվածք՝ սեռական հոլովով գոյական կամ դերանուն + էական բայ + անորոշ դերբայ. օրինակ. Քաջ արանց է յարձակ և յազատ տեղուշ կոռուի,

և կանանց գործ է արգելու փակել զինքեանս յերկիւղէ առ հանդերձեալ կռիւսն» (Խոր., 290. 1—3):

Մենք կարծում ենք, որ նման դարձվածքներում զեղչվել է «գործ» կամ նրան համանիշ մի բառ, ուստի և այս սեռականը փոխանուն սեռական է. այդ երևում է «կանանց գործ է արգելու փակել զինքեանս» կապակցութիւնից, որ կարելի էր և ասել «կանանց է արգելու...»:

Ահա և այլ օրինակներ. «Դո՛ւ երթիջիր, զի ի քարինս ղիւաց է շահատակել» (Խոր., 330. 20)՝ «Դո՛ւ զնա, քարքարոտների մեջ արշավելը դեերի գործն է», (Թարգմանութիւնը՝ Ս. Մալխասյանցի): «Զի որ զխորհուրդս ուրուք ճանաչել կարէ, նա ի վեր է քան զնա. որ Աստուծոյ միայն է, և ոչ մարդոյ» (Եզն., 2, 2, 93):

Նման դարձվածքները աշխարհաբար կարելի է թարգմանել նաև տարված է», «վայել է», «սազական է», «հատուկ է» և այլն արտահայտութիւններով:

բ) Հետևելու նախադասութիւնների մեջ զեղչված հատկացյալը գրաբ. ինչք (աշխհ.՝ ունեցվածք «ինչ որ մեկին պատկանում է») կամ համանման նշանակութիւններ մի բառ է.

«Զերթայ ի վերայ ընկերին և շեղծանի ինչ ակն. ղնելով զընկերին» (Թ. Թոռն., Հատընտիր, էջ 153): «Եւ յանկարծ ուրեք տեւանեսս եթե ծառայ զծառային յափշտակիցէ...» (Անդ., էջ 153): «Եւ թշնամիքն... աւար առին զթագաւորութեան» (Սեբէոս, 1913, էջ 81), այսինքն՝ զինչս, զստացուածս թագաւորութեան:

Փոխանուն ստացական դերանուններն ու փոխանուն սեռական դերանունները ևս արտահայտում են ունեցվածք «պատկանող բան» հասկացութիւնը. օրինակ՝

«Զիցէ՞ ինձ իշխանութիւն յիմսս առնել զինչ և կամիմ» (Մատթ., Ի, 15): «Զի է ի նոցանէ՞ որ զմեզ աշխատ առնէ, և է ինչ՝ որ մերումն վնասակար լինի, որպէս և մուկն և ցեց և որդն» (Եզն., 2, ԺԱ, 102—103): «Զի ոչ յափշտակեսցուք, զի ոչ աւերեսցուք, զի ոչ առցուք զայլոյ, ի՞նչ կեցցուք» (Բիւզ., 3, 2, 22), այսինքն՝ «զինչս, զստացուածս այլոյ»:

Փոխանուն ստացական և սեռական դերանունների ինչք, ունեցվածք, իմաստը ունի նաև լատիններն: Հոգնակի թվի շեղոք սեռի փոխանուն ստացական դերանունը լատիններենում նշանակում է՝ «ունեցվածք» և այլն:

գ) Հոգնակի թվով փոխանուն ստացական դերանուններն ու փոխանուն սեռական դերանունները առանց իրենց արտահայտած հատկացյալն ունենալու տվյալ կամ նախորդ նախադասութիւն

մեջ՝ արտահայտում են հավաքական իմաստ, նշելով անձանց, որոնք ընտանեկան, ազգակցական, ընկերական, ծանոթության, ազգային, պաշտոնակցական և այլ կապերով առնչվում են գերանվամբ արտահայտված հատկացուցիչին կամ անձնավորությանը։ Կարելի է ասել, որ այս դեպքում փոխանունը ոչ թե փոխարինում է զեղչված հատկացյալին (որ ընտանիքի անդամ, բարեկամ, ընկեր, զինվոր և այլն նշանակությամբ մի բառ է), այլ այդ բառիմաստն ունեցող իսկական գոյականի արժեք է ձեռք բերում։

Ընտանեկան կամ գերդաստանական կապ ցույց տվող փոխանունն ստացական դերանուններ և փոխանունն սեռական դերանուններ։

«Եւ որչափ ի վայր վայրէին ոսկերքն, նա յիւր ծոցն ժողովէր բովանդակ զամենայն զոսկերս սանին. և առեալ զնաց յիւսն» (Թիւզ., 4, ԾԹ, 271), «Յայնմ ժամու և ազգային նոցա Կամսար մկրտի իւրայովքն հանդերձ ի ձեռն մեծին Գրիգորի» (Խոր., 241. 5), «Քանզի և Տրդատ միահամուռ իւրովքն, և որք ընդ իւրովքն էին զօրքն... դիմեաց...» (Խոր., 234. 19), Ս. Մալխասյանցը թարգմանել է՝ «... Իրայիններով և իր ձեռքի տակ եղած զորքերով» (էջ 158), Սակայն քերականությունը թելադրում է՝ «յուրայիններով և յուրայինների ձեռքի տակ եղած զորքերով», քանի որ ունենք ընդ իւրովքն՝ փոխանունաբար կիրառված իւր ստացական դերանվան հոգնակի գործիականը (ընդ նախդրի հետ «տակ»՝ իրավական իմաստով), և ոչ թե իւր անձնական դերանվան եզակի գործիականը, իւրև, իւրեալ, իւրեամբ)։

Հետևյալ օրինակում փոխանունն սեռականը ամենայն ու գերանվամբ արտահայտված, բայց զեղչված հատկացյալն է պարփակում. «Եւ սատակեա՛ զտանն Աքաաբու, որ...» (Դ թագ., Թ, 8)։

Ընկերային, ծանոթության, պաշտոնակցական, իշխողի և ստորադրյալի և այլն կապ ցույց տվող փոխանունն ստացական դերանուններ և փոխանունն սեռական դերանուններ։

«Եւ անտի արձակեալ՝ եկին առ իւրեանցսն» (Գործք, Դ, 23). նախադասության ենթական է «Պետրոս և Յովհաննէս»։ Նրանք վերադառնում են մյուս առաքյալների մոտ։ «Եւ հրաժարեալ ի նոցանէ հանդերձ ամենայն իւրովքն, բերէր առ եպիսկոպոսն Ասորոց» (Կորին., 50. 12), Խոսքը վերաբերում է Մ. Մաշտոցին և նրա աշակերտներին։ «Տէր մեր յիւսն եկն և ոչ յօտարոտիս» (Նզն., 4, Թ)։

«Եւ էին նորա (Ներսեսի—Մ. Մ.) այն որք ընդ նմայն աքսորեցան յիւրոցն՝ երկու. անուն միոյն Ռոստոմ սարկաւազ...» (Թիւզ.,

4, 2, 142): «Անդէն ասաց՝ (թագ. Պարսից—Մ. Մ.) թէ այն փախուստ թագաւորին Հայոց յիմոց աստի եղեալ է» (Անդ, 209):

Ազգայնական կամ հայրենակցական կապ ցույց տվող փոխանուն ստացական դերանուններ, որ հաճախագոյնս հանդիպում են պատմագիրների մոտ, որոնք իրենց հայրենակիցներին անվանում են «մերք»։ օրինակ.

«Որպէս ասաց ոմն ի մերոցն» (Խոր., 39. 5): «Եւ խոցոտեալ մերքն յապուշ դառնային» (Խոր., 290. 14): «Եւ հողմ սաստիկ ի մերոցն կուսէ ընդդէմ պարսկականին փշեալ» (Խոր., 304. 15): Ս. Մալխասյանցը թարգմանել է՝ «Մեր կողմից սաստիկ քամի փշեց պարսկական (գնդի) դեմ»։ Բառացի կարելի էր ասել՝ «Մերոնց կողմից...»։

Փոխանուն ստացական դերանունների վերոհիշյալ հավաքական իմաստները հատուկ են նաև այլ լեզուների։ Այսպես օրինակ, չատիններենում «ազգական, բարեկամ», «ընտանիքի անդամ» և այլն նշանակող փոխանուն ստացական դերանունը դրվում է արական սեռի հոգնակի թվով։ Ֆրանսերենում հոգ. թվի արական սեռի ստացական դերանունը նշանակում է «ծնող, բարեկամ, ազգական» և այլն։

դ) Գոյական փոխանուն սեռականների մեջ արտահայտված հատկացյալը երբեմն վերը նշված բառիմաստներից (գործ, իրք, ինչք և այլն) ոչ մեկը չէ. ամեն մի դեպքում դա մի բառիմաստ է, որ մեզ թելադրում է նախադասության ընդհանուր իմաստը։

Այսպես օրինակ, հետևյալ նախադասություններում փոխանուն սեռականներն արտահայտում են ինքն (գրաբ. բան) բառիմաստը. «Իսկ ես, ասէ, յերկրէ խօսեցայ, յերկնից առեալ զգիտութիւն, իսկ որ յերկնիցն եկն՝ նա զՀօրն խօսի և զՀօրն գործ գործէ» (Ագ., 219. 5—6), այսինքն՝ «Նա զբան հօրն խօսի»։ «Եւ արդ՝ եկեալ աշակերտօքն ի լեառն Զիթենեաց, զի կատարեսցէ զմարգարէին որ ասէ, թէ «Եկեսցէ հասցէ տէր Աստուած...»» ((Ագ., 229. 5—6), այսինքն՝ զի կատարեսցէ զբանն մարգարէին...։

Հետևյալ նախադասության միտքը թելադրում է, որ փոխանուն սեռականի արտահայտած իմաստը ձայն բառն է.

«Եւ նուազաց արուեստականացն խստաձայնիցն դժկամակութեամբ լսեմք՝ թմբկի, պատերազմացն փողոց, և որ շիցեն նոյն պիսիք՝ զայն ախորժելով լսեմք, զփռոյ, զջնարին և զֆնարի, զփանդոսան, զվնի, զսրնգի» (Թ. Թոռն., Հատընտիր, էջ 227)։

Հետևյալ օրինակում փոխանուն սեռականները արտահայտում են ստորոգյալի խնդիրը. «... Զի... զհագեղինացն և զմարմնաւ-

րացն առ հասարակ փայլիցեն» (Կորին, 24. 15)՝... որպեսզի ընդհանրապես և՛ հոգեղենների, և՛ մարմնավորների (փայլով) փայլեն: Չեղոր սեռի բայր գործիական հոլովի իմաստով, սակայն հայացական հոլովով խնդիր է ընդունում երբեմն այն գոյականը, որից ինքը կաղավիւ է. հմմ. «Երկեան երկիւ մեծ»:

Եղիշեի հետեյալ նախադասութեան մեջ փոխանուն սեռականը ներառյալ է պատասխանի կամ ճառացումն բառը.

«Իսկ եթէ որդիքն արդարք՝ վասն հարցն մեղաց ընդունին զսատակումն, յորժամ ինքեանք որդիքն իսկ մեղիցեն, ո՞չ ահա միանգամայն զանձանց և զհարց տայցեն ի միասին» (Եղիշէ, 56. 13—15)՝ «... Զէ՞ որ թէ՛ իրենց և թե՛ հայրերի փոխարեն միանգամայն պետք է պատասխան տան» կամ հատուցեն:

Հետեյալ նախադասութեան մեջ զեղչված հատկացյալը «քօսլք» արձակման վկայագիր» կամ դրանց համանիշ մի բառ է.

«Որ արձակիցէ զկին իւր՝ տացէ նմա զարձակմանն» (Մատթ., Ե, 31)՝ Ով որ իր կնոջը բաց է թողնում, թող նրան ազատ արձակման թուղթ տա:

Ժամանակակից հայերենում նման փոխանուն սեռականներ, որոնց հատկացյալները երբեք չեն արտահայտվել կոնտեքստում, այնքան լայն տարածում չունեն, որքան գրաբարում:

Սովորաբար փոխանուն ստացական դերանունը կամ փոխանուն սեռականները գրաբարում իրենց մեջ ներփակում են մեկ զեղչված գոյական: Հ. Աճառյանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բարբառներում փոխանուն սեռական դերանունը կարող է պարփակել երկու գոյական. դա լինում է այն ժամանակ, երբ զեղչված հատկացյալը հետոն էլ մի հատկացուցիչ է ունեցած լինում¹:

Կարծում ենք, որ հետեյալ գրաբար նախադասությունների մեջ փոխանունը ներառել է հատկացյալն ու նրա հատկացուցիչը.

1. «Արդ եթէ հաւատաս ցիս զմասինդ քո՝ իշխանութիւն, որպէս և կայսր զիւրոյս՝ պատրաստ եմ պաշտել զքեզ՝ որպէս զկայսր» (Յոր., 310. 23):

Այստեղ զեղչվել են «զմասինս իշխանութիւն» բառերը, ուստի փոխանուն ստացական դերանունը փոխարինել է ոչ միայն իր զեղչված հատկացյալը՝ «մասինս», այլև սրա հատկացյալը՝ «զիշխանութիւն», «մասինս» բառը ստացական դերանվամբ արտա-

¹ Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատ. 2, էջ 291—337.

հայտնված (իւրոյ) հատկացուցչի հատկացյալն է, սակայն իր հերթին հատկացուցիչն է «զիշխանութիւն» բառի՝ «Իր մասի իշխանությունը»:

Ս. Մալխասյանն այս նախադասութիւնը թարգմանել է՝ «Արդ եթե դու ինձ հավատաս քո բաժնի իշխանությունը, ինչպես կայսրն իրենը...» (էջ 213), կայսրը Արշակին վստահել է հայաստանյան իր կայսերական բաժնի իշխանությունը, Ուստի կառաջարկեինք այս նախադասութիւնը թարգմանել՝ «Արդ, եթե դու ինձ վստահես քո բաժնի իշխանությունը, ինչպես կայսրը՝ իր բաժնիը...»:

2. «Ամբ ժամանակաց ծննդոցն Քամայ մինչև ցնինոս ոչ ուրեք գաանին թուեալ, և կամ թէ առ մեզ ոչ հասեալ, այլ հաւատեալ և ոչ նորին ինքեան նինոսի, իսկ մերոյն Յարեթի ամենևին ոչ» (Խոր., 20. 8—11). ընդգծված փոխանուն սեռականները պարփակում են «ամբ ժամանակաց ծննդոցն» բառերը՝ հատկացյալն ու նրա հատկացուցիչը, եթե «ամբ ժամանակաց»-ը համարենք հատկացյալ, մեկ հասկացութիւն, անտեսելով «ժամանակաց» սեռականով ավելադրութիւնը:

М. П. МИНАСЯН

РОДИТЕЛЬНЫЙ СУБСТАНТИВНЫЙ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА

Р е з ю м е

Родительный субстантивный древнеармянского языка заменяет собой сочетание несогласованного определения с определяемым. Его частое употребление в большинстве случаев затемняет смысл текста и затрудняет его точное понимание. Это случается особенно тогда, когда определяемое вышеупомянутого сочетания не выражено в предшествующих предложениях. Автор исследует родительный субстантивный древнеармянского языка во всех его проявлениях. Он доказывает, что родительный субстантивный древнеармянского языка, в отличие от современного, не склоняется и употребляется всегда с артиклем, обычно в значении имени-

тельного и винительного, лишь очень редко в значении других падежей. Употребление предлогов с формой «родительный субстантивный» возможно лишь в том случае, если определяемое сочетание, которое он заменяет, имел этот предлог.

В статье подробно разбираются те случаи этой категории, когда она заменяет те сочетания, в которых никогда не бывает выражено определяемое.